№ 233 Դեկտեմբերի 15 (27) 1881 Դեկտեմբերի 15 (27) № 233

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի:
Ազատին համարները 5 կոպէկով:
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Ուտարարաղաքացիք գիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ Նոր-Նախիջևանից: Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Ֆրանսիա: Նամակ Աստրիայից:—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Նամակ խմբագրին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

Նոյեմբերի 17-ին

Նոյեմբերի 16-ին մեր թատերասիրաց խումբը ներկայացուց պր. Սունդուկեանցի «Պէպօ» Նախիջևանի բարբառով թարգմանած: Երիտասարդները, օրիորդները և մի մատաղահաս տիկին խաղացին հիանալի. թատրոնը և բեմը գեղեցիկ զարդարած էին. հանդիսատեսները լարված մատդուրթեամբ նայում էին. թատրոնը լիքն էր. միով բանիւ՝ ամեն բան իր տեղն ու կարգին էր, միայն պակաս էր խաղի ազդեցութիւնը: Պարոն Սունդուկեանցի «Պէպօն» անհասկանալի մնաց Նախիջևանցիներուն, և պատճառը այն է, որ Թիֆլիսցին նման չէ Նախիջևանցին. Թիֆլիսի մարդիկ չը կան Նախիջևանի մէջ: «Պէպօն», որի անձնաւորութեան շուրջը պատում է գալիս բոլոր խաղի իմաստը, «Պէպօ», կրկնում եմ, չը կայ Նախիջևանի մէջ. իսկ նա, որ համապատասխան է մեր տեղի դասակարգի այդ անհատին և որին մենք նախիջևանցիքս անուանում ենք տ ռ ա կ ի ւ կամ տ ա ռ ի ա ց ի, մի այնպիսի վատահամբաւած, արհամարհված, անհամակրելի էակ է, որի վրա օրինաւոր նախիջևանցի կինը չի նայիլ անգամ, ոչ թէ ցանկայ թատրոնի ազնիւ բեմի վրա տեսնելու:

Հայկական նախապաշարմունքը հրէշալի է: Բաւական չէ որ Նախիջևանը «Պէպօ» չունի, չունի նա մինչև անգամ նրա մօրը՝ Մարիամին և նրա քրոջ՝ Անուշին. իսկ մեր տեղի Մկրտումը, մեր քաղաքի փոքրկութեան պատճառաւ, պր. Սունդուկեանցի Մկրտումից չատ մանր է, այնպէս որ պր. Սունդուկեանցի Մկրտումը մեր բեմի վրա մի առասպելական հրէշ երևեցաւ, և այդ պատճառաւ հաւատ չընծայուեցաւ նրա կենդանի մարդ լինելուն: Ժողովրդական բարքառով կարելի է և պէտք է նկարագրվի միայն ժողովրդական տեսարաններ:

Պարոն Խաղամեանը թարգմանել էր «Պէպօ» այնպիսի գեղեցիկ տեղական բարբառով, որ ըստ ամենայնի արժանի էր բնագրի բանաստեղծական, խաղացկուն ու հուժկու լեզուին. նոյն գեղեցկահիւս և խմաստալից նախադասութիւնները և խօսքերը, նոյն ժողովրդի սրտի խորքէն բղխած առածները ու ասացուածները... բայց ինչ շահ, ոչ մարդիկն էին մեր տեղի մարդիկը և ոչ նրանց վարք ու բարքը՝ մեր տեղինը: Իմ կարծիքով, եթէ «Պէպօ» չը թարգմանվեր, այլ հեղինակի գրած բարբառովն ներկայացուէր՝ ազդեցութիւնը աւելի կը լիներ. վասն զի յայտնի բարբառի հետ միասին մարդս երևակայութեամբ թռչում գնում է այդ բարբառը ի կիր արկանող ժողովրդի մէջ. կարճ՝ լեզուն և ոճը օգնում են կատարեալ զարձնելու անցքի ստորագրութեան ազդեցութեանը:

Այնօր ես բոլորովին համոզվեցայ, որ Նախիջևանցոց երկարատև բացակայութիւնը Հայաստանէն բոլորովին օտարացրել է նրանց հայկական ոգիէն. Նախիջևանցին թէև կրօնով ու լեզուով հայ է, բայց նրա ոգին (բայց ոչ հոգին) փոխվել է. այդ ասելով ես չեմ ուզում հակացնել, որ նա վատացել է, այլ ուզում եմ համոզել որ, որ և է ժողովուրդ անպատուհաս չէ կարող, ինչպէս երբեմն դրա հակառակն էի կարծում, սպասի ու փլաի տեղ բ օ ռ ջ ու կ ա շ ա՞ ուտել: Կրկնում եմ խօսքս՝ «Պէպօ» չը կայ Նախիջևանի մէջ, և ոչ պառաւ Մարիամ, և ոչ կաթոգին Անուշ, բայց շատ կան (լսեցէք, լսեցէք) տիկին Լիլինկաներ, և նոցանից մէկի դերը օրիորդ Սալթիքեանը շատ գեղեցիկ կատարեց: Այնօր սաստիկ վրդված դուրս եկայ թատրոնից, և վրդովմանս պատճառը այն էր, որ, ինչպէս քանի մի տող առաջ յիշեցի, մեր Նախիջևանցին ոգով օտարացել է իր հայաստանցի եղբայրներէն, ուրեմն նրանց հետ միասին ամբողջութիւն չէ կազմում: *)

Բայց մի չափազանց մութիթարական բան նկատեցի: Պր. Մարկոս Սկիտարեանը այնպէս սիրուն խաղաց Գրիգոր աղայի դերը, որ կարծես թէ առջևդ մի չատախօս, սրատաչուկ ծերուկ ես տեսնում, որին մինչև անգամ միտդ գալիս է թէ մի տեղ տեսել ես: Այս մի անգին գիւտ է մեզ համար, և ես չնորհաւորում եմ հայկական բեմը այնպիսի դերասանով, որը կենդանի թարգմանն է դառնում հեղինակի և հանդիսատեսի մէջ: Ես տեսել եմ Թիֆլիսի հռչակաւոր հայկական բեմը. և ես միանգամայն համաձայն եմ հօրեղբօր որդուս հետ, որ դասում է այն ի շարս եւրօպական երեւելի բեմերին. բայց գիտէ՞ք ես էլ ձեզ ինչ կասեմ,—պարոն Մարկոս Սկիտարեանը Թիֆլիսի հայկական բեմին ևս պատիւ կը բերէր, եթէ բաղդի բերմամբ ինքն իրան ազատ արուեստի նուիրէր: Բայց ափսոս որ նախապաշարմունքը տիրապետել է մեր բոլոր մարդկային յատկութիւնները. մեր կարծիքով դերասանը իրաւունք չունի ինքն իրան այս կամ այն դասակարգին վերաբերելու, դերասանը մի անորոշ կոչման տէր մարդ է, մի բաղդախնդիր է, մի զրօ է մարդկութեան: Ո՞ր յիմարը կը յօժարի դրպարի պաշտօնը թողնել և դերասան դառնալ. միայն Շէքսպիրի ու Մօլիէրի պէս թշուառականներին վիճակված էր այդ ստոր պաշտօնին անձերը նուիրելու: Դերասան, լարախաղաց, ակնածու, չ ա ռ մ ա ն չ է ք—մի և նոյն բաներն են, այնպէս չէ՞, պարոն հայեր: Ապրիք:

Պր. Սունդուկեանցի առաջ բերած անձինք չատ ապերախտ դերեր տուին մեր թատերասէրներուն. բայց այդ ասելով ես չեմ ուզում հակացնել, որ նրանք իրանց գործը վատ կատարեցին. ամենևին ոչ:

Օր. օր. Սալթիքեանը, Ալաճալեանը, տիկին Խաղամեանը, պր. պր. Խաղամեանը, Ալաճալեանը, Սկիտարեանը, Խաչատրեանը, Քիստեանը բոլորովին համոզեցին ժողովրդին, որ մենք արդէն ունենք այժ Նախիջևանի մէջ մշտատև հայկական թատրոն ունենալու. եթէ յիշեալ անձանց մենք ընկնի մի օրինաւոր ժողովրդական տեղական յօդուած նրանք չատ լաւ պիտի ներկայացնեն:

Էլի մի նկատմունք: Նախիջևանցին չէ սիրում.... չէ, սիալ ասացի, Նախիջևանցին վախենում է, սարսափում է կատակարանութիւնից ու երգիծարանութենից. ամեն մի կատակարանի ու երգիծարանի ճանաչում է նա ինչպէս իր անուան վատահամբաւիչը, ինչպէս իր ոխերիմ թշնամի: Այդ ինչ է նշանակում, գիտէ՞ք: Այդ կը նշանակէ, որ նա բարոյապէս հիւանդ է. այդ նշանակում է, որ նրա հիւանդութիւնը վտանգաւոր է....

Վիրահատ բժիշկները նկատել են, որ երբ հիւանդը վիրաբուժական զէնքերը տեսնելով սոսկայ, կը նշանակէ նրա հիւանդութիւնը անբուժելի է ու ինքը մնացական չէ. մրճի տակ երկաթը սնդանում է, պողպատ է դառնում, իսկ ապակին փշրվում է: Իմ կարծիքով Նախիջևանի բեմի վրա չը պիտի ծաղկի կօմէդիան, գոնէ այս մօտ ժամանակներումս. իսկ առանց կօմէդիայի թատրոնը երբէք ժողովրդականութիւն չի ստանայ:

Մտացածին հերոսներ, հերոսուհիներ, սուտ քաջագործութիւններ, չեղած պատմութիւններ, երևակայական առաքինութիւններով զարդարած անձինք, դաշոյն, թոյն, հրացանի պայթիւն, արիւն—ահա մեր Նախիջևանցիի սիրած բաները բեմի վրա.... Նախիջևանցոց այս թուլութիւնը լաւ հասկացել էր պ. Ֆատուլէեանը և առատապէս մեծարում էր նրանց, և այդ իսկ պատճառով իր անմահ յիշատակը թողեց մեր սրտերի մէջ: Այնուամենայնիւ թատերասիրաց ընկերութիւնը չը պիտի յուսահատվի, այլ ընդհակառակն, ամեն կերպ զոհաբերութիւնների պատրաստ լինելով, առաջ պիտի տանի իր ազնիւ գործը:

*) Մենք համաձայն ենք նամակագրի հետ որ Սունդուկեանցի պիէսները անհասկանալի պէտք է լինեն Նախիջևանցու համար, բայց ինչի Նախիջևանում չեն տալիս մեր բանաստեղծ Ռաֆայել Պատկանեանի այն պիէսան, օրինակ, որ, ինչպէս լսեցինք, շատ անչատ կերպով նկարագրում է կենդանի և մեզ համար ծանօթ անձնաւորութիւնները:

Խմբ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 10 դեկտեմբերի

Բաղ-Սօղէնէն գրած նամակում («Մշակ» № № 144 և 145) ես խոստացած էի պատուական թերթիդ ընթերցողներին մի անգամ խօսել այն խնդրի մասին, որը այժմ թէ մեր պարբերական գրականութեան և թէ թիւրքաց հայերի քաղաքական կեանքի մէջ օրական հարց է դարձած, այն է՝ Եւրօպայում ունենալ մի օրգան, որի նպատակը լինի պաշտպանել հայոց խնդիրը:

Ափսոսում եմ, որ հանգամանքները չը ներեցին ինձ աւելի վաղ կատարել խոստմունքս, բայց ուրախ եմ, որ այժմ աւելի հաստատ կերպով կարելի է խօսել այդ խնդրի վրա, որովհետև այս միջոցում հաւաքվեցան մի քանի փաստեր, որոնք մեծ ազդեցութիւն կը լինեն վերցրած առարկայիս պարզութեան և համոզիչ բարեսիրտ ընթերցողների համար: Այդ օրգանի անհրաժեշտութիւնը այն աստիճան չոչափելի էր, որ այս ամառ ցանկացողներ եղան մինչև անգամ առաջարկել երևելի հայկական Դիւլօրիէին ձեռնամուխ լինել այդ գործին և, որքան ինձ յայտնի է, վերջինս էլ յայտնել էր իր յօժարութիւնը: Ես այն ժամանակն իսկ աշխատեցի ցոյց տալ դրա անյարմարութիւնը (վերոյիշեալ նամակի մէջ), բայց անյարմարութիւն ասելով, ես չեմ ուզում ասել, թէ հարկաւոր չէ այդպիսի ձեռնարկութիւն, քաւ լիցի, այդ սրբապղծութիւն կը լինէր իմ կողմից. ես Դիւլօրիէի օրգանը միայն թիւրքաց հայերին օգտաւէտ չէի գտնում. ես ցանկութիւն էի յայտնում ձեռք բերել Եւրօպայի զանազան տէրութեանց մէջ ինքնուրոյն լրագիրներ: Գուցէ այն ժամանակ այս ցանկութիւնը տղայական համարվէր մի քանիներից, բայց այժմ պարզ երևում է, որ դա տղայական չէր, այլ շատ հեշտ իրագործելի. «Journal d'Orient»-ը չը յապաղեց ապացոյց լինել ասածիս, այժմ մի ռրիշը՝ աւելի հռչակված և աւելի մեծ նշանակութիւն ունեցող, նոյնպէս ցանկանում է հայոց հարցին զօրաւոր պաշտպան կանգնել: Սակայն, որպէս զի ասածս լոկ խօսքեր չը համարվին ընթերցողի կողմից, ես այստեղ մէջ կը բերեմ մի բարեկամիս նամակը փարիզէն գրած. նա գրում է. «Այժմ ես գտայ մի լրագիր, որ է La Justice (լաժիւսթիս-արդարութիւն), իմ մի ներփոխան (deputé) բարեկամիս միջնորդութեամբ. սրա երկու խմբագրաց, Քամիլ Բէլբթանի և Քլէմանսօի հետ ալ տեսնուեցայ. այս վերջինը երեսփոխան է և չը կայ շամպրին մէջ մէկը, որմէ առաւել խորչի Կամբէթա, քան թէ Քլէմանսօ: Որովհետև Կամբէթա նոր նախարարութեան պետը պիտի լինի (յայտնի է, որ արդէն եղել է), ալ կրնաք երևակայել, թէ այս անձը և նրա լրագիրը մեր կողմ շահելը որչափ օգտակար կրնայ լինել մեզ: Արդ այս լրագիրը կը խոստանայ. 1) առ այժմ շաբաթը մի և յետոյ երկու յօդուած ընդունել մեզնէ, զորս մենք պիտի խմբագրենք. 2) կը խոստանայ յօդուածները տպել զատ՝ համառօտագրել իր քաղաքական տեսութեան մէջ և խմբագրական յօդուածներ ալ նուիրել հարկաւոր խնդրոյն, երբ իր ձեռքը բաւականի դգքիման և ժամանակ կունենայ լաւ մը խմաստասիրելու համար. 3) կը յօժարի մի և նոյն ժամանակ և Կամբէթայի ընտրութիւնէն վերջը interpellation մը ուղղել նախարարութեան 61-րդ յօդուածոյ անդործադիր մնալուն վրա. 4) երբ իրեն article à sensation մը տանք, այդ յօդուածը պարունակող թիւէն 100—150 օրինակ պիտի տայ մեզ, որպէս զի ուղած տեղերնիս ցրուենք. 5) իմ մանաւոր բարեկամս, որ դատական (ի վերայալ կը հրատարակուի) լրագրի մը խմբագիր ալ է, կը խոստանայ արտատպել այդպիսի յօդուածները. 6) այս ամենուն փոխարէն տասն հազար ֆրանք կը պահանջէ տարին, եռամսեայ և կանխիկ վճարելի»: Այս տողերը արդէն գրված էին երբ կարդացինք «Մշակի» մէջ, թէ Քլեմանսոն հրաժարվել է իր առաջարկութիւնից և նրա տեղը բռնել է երեսփոխանների ժողովի փոխ-ատենապետ Ֆլօքէն՝ առաջարկելով իր լրագիր Union republicaine-ը. սա պատրաստ է կատարել Քլեմանսօի տուած պրօգրամը գուցէ աւելի արժան գնով: Բացի սրանից մեզ արդէն յայտնի է, որ Լօնդոնումն ևս հաստատվում է գաղղիերէն և անգլիերէն լեզուներով մի լրագիր The Oriental Gasette անունով, որի գլխաւոր նպատակը նոյնպէս պէտք է լինի հայոց խնդիրը: Թողնելով մէկ կողմ առ այժմ միւսները, փոքր ինչ խօսենք Ֆլօքէի օրգանի և նրա ինչ նշանակութիւն ունենալուն մեզ, հայերս մասին: Եթէ այսօր Ֆրանսիայի մէջ կան մի քանի անձինք, որոնք այդ տէրութեան թէ ներքին և թէ արտաքին քաղաքականութեան մէջ դեր կը խաղան, դրանցից մէկն էլ անշուշտ Ֆլօքէն է, ազատամիտ կուսակցութեան պարագլուխներից մէկը: Իսկ Ֆրանսիայի ներկայ կառավարութեան գաղափարը աւելի ազատամիտների ուղղին ու պահանջմանցը կը համապատասխանէ, քան թէ միւս կուսակցութեանց, մանաւանդ երբ կառավարութեան գլուխ կանգնած է Գամբէտտա:

Այս երկու անձանց համոզմունքները, կարծիքները և դաղափարները մի է, որովհետև ազատութեան դրօշակը իրանց ձեռքում, իբրև առաջնորդ բռնած ունեն: Այդ եթէ տեսնեն դրանք և դրանց համախոհները (որոնք այժմ Ֆրանսիայի մեծամասնութիւնն են կազմում), որ կայ մի ազգութիւն, մի ժողովուրդ, ինչպէս մեր արիւնակից տաճկահպատակ հայերը, որը տարկական լուծի տակ ճընշված, գետին տապալած՝ ազատութեան հոտն անգամ չէ լսում, մթիթէ չեն աշխատի այդ մարդ կայէն ազատութեան ախոյեանները նրան օգնութեան ձեռք հասցնել, նրան ոտքի կանգնեցնել՝ ծանր լուծը նրա պարանոցից հեռացնելով: Այստեղ երկու կէտ կայ, որոց համար բացատրութիւն կը պահանջէ ընթերցողը. նախ՝ նրանք ինչպէս պէտք է տեսնեն այդ ժողովրդի տարկութիւնը և երկրորդ՝ ինչպէս պէտք է օգնութեան ձեռք հասցնեն: Տեսնելու համար ներկայումս միակ մի ճանապարհ կայ, այն է մամուլը, լրագրութիւնը. սա է մտնում, թափանցում աշխարհիս ամենախոր անկիւնները ու այնտեղից հանում, լոյս աշխարհ դուրս բերում այնպիսի խնդիրներ, որոնք յաւիտեան չը գիտութեան կամ մոռացութեան ապառաժների տակ կը մնային, մինչդեռ այսօր մամուլի չնորհիւ երևան լինելով, օրական հարց են դառնում և շուտով իրանց որոշ վճիռը ստանում:

Արդեաք իրաւունք չունենք և մենք յուսալ, որ մամուլը այնքան այժ ու կարողութիւն կունենայ հայոց հարցն էլ տեսանելի, չոչափելի անել եւրոպացւոց առաջ: Իսկ երբ նա տեսանելի կը լինի, երբ նա մեծամասնութեան մտածմանց ու խօսակցութեան առարկայ կը դառնայ, հետևարար անշուշտ նա մի ղարկ, մի շարժումն պէտք է ստանայ, չէ կարող միշտ մի և նոյն անշարժ դրութեան մէջ մնալ. ծովի մակերևոյթը հանդարտ է միայն մինչև առաջին քամին, երբ վերջինս վերկացաւ, այն ժամանակ կը տեսնէք, որ բիւրաւոր

Մշտական հայկական թատրոն և թատրոնի նորակառույց չէնք ունենալու ցանկութիւնը նոր չէ մեր մէջ. քանի քանի անգամ զանազան ծրագիրներ առաջարկվեցան քաղաքի մէջ, մի պատշաճաւոր տեղ, յատկապէս հայերէն ներկայացումների համար չմնել թատրոն, և ամեն անգամ պէսպէս տեղական պատճառներից յետաձգվեցաւ դրա կատարումը. բայց բուն հայկական թատրոնի գաղափարը կենդանի է ամեն մի նախիջևանցիի սրտի մէջ. եթէ այսօր չը լինի՝ վաղը, վաղը չը լինի՝ միւս օր, մի, երկու, երեք տարիէն Նախիջևանը անպատճառ կունենայ իր սեպհական հայկական թատրոնը: Բայց ցանկալի էր, որ Գրիգոր Սալթիքեանի և Մինաս Պալասանեանի պէս մարդոց աշխոյժը ու գործունէութիւնը ի զուր չը կորչէր մեր քաղաքի համար զանազան մանր մունր բաներով, որոնք, ժամանակի պահանջմանց նայելով, առանց մեծամեծ ջանքի էլ պիտի իրագործվեն: Ուրիշ բան է զուտ հայկական քաղաքի մէջ, ինչպէս որ Նախիջևանն է, հայկական թատրոն կառուցանելը: Թատրոնի պէս չքեղ չէնքի հետ կապակցել իր անունը—կը նշանակէ անմահացնել իր յիշատակը:

Եթէ մի անհատ (Գ. Արծրունի) կարողացաւ իր սեպհական ուժով թատրոնի չէնքը գլուխ բերելու Թիֆլիսում, ինչու տասներկու հաղարեայ ժողովուրդ չը պիտի կարողանայ նոյնը անելու Նախիջևանի մէջ— խնդիր է մեզ պակաս, թէ ցանկութիւն, թէ փող. այդ ամենը Աստուծով, կը գտնվի մեր մէջ, միայն թէ ունենայինք մի փոքր բարի կամք:

Ա՛խ ա՛խ ա՛խ, մեր չատ հայրենասէր առաքինութիւնների հետ միասին ցնդել է մեր մէջէն այդ օրհասական բարի կամքը: Եթէ իմանայի թէ ո՞ր չուկայումն է ծախվում «բարի կամքը», հաստատէք որ ունեցած—չունեցածս կը ծախէի, ու կը գնէի Նրան ու լիաձեռն կը բաժանէի իմ համազգիներուս:

Բարի կամքը գործի կատարման կէսն է:

Սիւլիվկ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Զինից յետոյ սկսեց անձրև գալ Թիֆլիսում, իսկ անձրևից յետոյ քամի վեր կացաւ: Առհասարակ այս ձմեռը եղանակը չատ փոփոխական է:

—

Մեզ խնդրում են տպել հետևեալ տողերը «Հայոց բարեգործական ընկերութեան կանոնադրութեան զօրութեամբ ընկերութեան ընդհանուր ժողովները պէտք է տարին երկու անգամ տեղի ունենան, այն է մայիսի 15-ին և դեկտեմբերի 15-ին, բայց որովհետև այդ վերջին օրը կիրակի չէ գալիս, իսկ անդամների մեծ մասը ազատ չէ մի օրերը, լսում ենք որ ընդհանուր ժողովը լինելու է դեկտեմբերի 20-ին, կիրակի օր:»

—

Վատ չէր լինի, եթէ ԹԻՖԼԻՍԻ փօստատան մէջ դահլեր միչտ մի ներկայացուցիչ մաքսատանից, եթէ ոչ չատ դժուար է փողերը արտասահմանից ստացողների համար ամեն անգամ գնալ մաքսատուն:

—

Մեր աշխատակից պ. Բաֆֆի խնդրում է մեզ յայտնել հետևեալը: «Այն պատուելի պարոնները, որոնք գաւառներում յանձն են առել վաճառելու «Դավիթ-բէկ» վէպը, թող բարեհաճեն իրանց մօտ գտնված փողերը ուղարկել «Մշակի» խմբագրատունը հեղինակի անունով: Նոր ստացված փողերը պէտք է գործ դրվեն յիշեալ վէպի մնացած հատորների տպագրութեան համար:»

—

Լսում ենք որ հայոց դերասանական խմբի անդամներից երկուսը, որոնք բաական ծանօթ են բեմական արհեստին, դիտաւորութիւն ունեն պ. Բաֆֆիի «Խենթը» անունով վէպից կազմել մի դրամա և այդ մասին արդէն ստացել են հեղինակի թոյլտուութիւնը:

—

Այս օրերս հասաւ ԹԻՖԼԻՍ, Պարսկաստանից գալով, պ. Գրիգորովիչ, մի ձեռնածու, որ ամբողջ Եւրօպայում և Ռուսաստանում պտտելուց յետոյ, վերջին ժամանակները ներկայացումներ տուց Թէհրանում, որտեղ մեծ աջողութիւն ունեցաւ: Պարոնը դիտաւորութիւն ունի այս օրերս մի երկու ներկայացումն էլ տալ Թիֆլիսում, Արծրունու թատրոնում: Այնուհետև նա կուղևորվի դէպի Ռուսաստան:

—

«Кавказъ» լրագրում կարդում ենք: «Մեր հաղորդած լուրը, որ մենք վերցրինք «Московск. Вѣд.» լրագրից, թէ արդէն կայացել է Բարձրագոյն հրաման Կովկասեան փոխարքայութիւնը վերցնելու և տեղական բոլոր վարչութիւնները համապատասխան մինիստրութիւններին ստորադրելու մասին, յայտնվում է, ինչպէս իմացանք ստոյգ աղբիւրներից, ոչ թէ միայն տարաժամ և անճիշդ, բայց և անհամաձայն այն պաշտօնական տեղեկութիւններին, որոնք յայտնի են Կովկասեան բարձր կառավարութեանը:»

—

Ստացանք Թիֆլիսից տիկին Թամար Աղամեանցից 8 բուբլ «Ժուրնալ դ'Օրիան» լրագրի բաժանորդագին, նոյն լրագրի բաժանորդագին 4 բուբլ պ. Ն. Բաբուրօվից, Կատավ-Իվանօվսկի գործարանից և վերջապէս 4 բուբլ պ. Կարապետ Պօպօվից, Փօթիից: Առաջվայ փողի հետ կանի 524 բուբլ:

—

Լրագիրները հաղորդում են որ «Вѣстникъ Европы» ամսագրի հետևեալ համարում կը տպվի Տուրգենեվի նոր վէպ «Отчаянный» վերնագրով:

—

Վիէննայի «Journal d'Orient» լրագրում կարդում ենք հետևեալը: «Մեզ գրում են Կ. Պօլսից: Կարդացինք Թիֆլիսի «Մշակ» լրագրում որ Փարիզի «Justice» լրագիրը, պ. Կլէմանսօի օրգանը, որ ինքն կարող է մինիստր դառնալ, պատրաստ է պաշտպանել հայոց դատը և Թիֆլիսի լրագիրը յանձն է առնում բաժանորդութիւն հաւաքել «Justice» լրագրի համար: Խնդրում ենք յայտնել որ մենք մեր յոյսերը դնում ենք Գամբէտտայի մինիստրութեան վրա և ոչ թէ մարտի 18-ի մարդու մինիստրութեանը երազական հասնելուն: Մենք յոյս ունենք Գամբետտայի պաշտպանութեան վրա, մի մարդու, որի հոգին մատչելի է ամենաազնիւ զգացումներին և որի քաղաքականութիւնը չէ կարող անտես առնել մահմետականների ձեռքում մարտիրոս հայոց ազգի շահերը: Նրան, Գամբէտտային ենք դիմում մեր աղերսով և հաստատած ենք որ նա չի թողնի հայերին: Բայց մենք չենք կամենում ոչինչ ընդհանուր ունենալ պ. Կլէմանսօի հետ, որին միայն նոր յեղափոխութիւնը, որ անշուշտ մնասակար կը լինի Ֆրանսիայի համար կարող է հասցնել մինիստրութեանը: Աստուած պահպանէ ֆրանսիական հանրապետութիւնը և մեզ պ. Կլէմանսօի մինիստրութենից:»

—

«Кавказъ» լրագրի կիրակեայ համարում կիսապաշտօնապէս հաղորդված է, որպէս պատասխան նախընթաց համարի հաղորդութեան, թէ որովհետև պաշտօնապէս ոչինչ հաղորդված չէր «Միջազգային հեռագրական» ընկերութեան միջոցով կովկասեան փոխարքայութեան վերցնելու մասին, այդ պատճառով «Моск. Вѣд.» լրագրի լուրը պէտք համարել տարաժամ, բայց, ուրիշ կողմից, և այն լուրը թէ կովկասեան վարչութիւնը ունի տեղեկութիւններ, որոնց իբր թէ անհամաձայն է Մոսկվայի լրագրի տեղեկութիւնը, նոյնպէս հաստատ հիմք չունի:

—

«Մշակի» բաժանորդները սկսել են վճարել 1880 և 1881 թվի ապառիկները: Մենք կը սպասենք մինչև յունվարի 1-ը առաջիկայ 1882 թվի: Եւ այն ժամանակ ով որ դարձեալ չի վճարի անցեալ ապառիկները, մենք 1882 թվի առաջին համարներում կը հրատարակենք նրանց անունները ու ազգանունները:

—

Ստացանք Թիֆլիսում հրատարակվող ռուսաց «Гусли» պատկերազարդ, ծաղրական շաբաթաթերթի երկու համարը: Այդ հրատարակութեան խմբագիրն է պ. Տիսօրժէվսկի, աշխատակիցներից մինը պ. Պալմն է, իսկ պատկերները նկարում է պ. Զէմօդանով:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

—

Դեկտեմբերի 12-ին սենատի նիստից առաջ նախագահ Լէօն Սէ երկար խորհրդակցութիւն ունէր Գամբետտայի հետ: Հերթական հարցը Տունիսի կրեդիտի քննութեան շարունակութիւնն էր: Աջակողմեան կուսակցութեան անդամ Ֆրենօ առաջարկեց պահանջված կրեդիտից հանել 25,000 ֆրանկ, որպէս զի կառավարութեանը կողմնակի պախարակութիւն յայտնվի: Ճառախօսը պախարակում էր կառավարութեան քաղաքականութիւնը Տունիսի հարցի վերաբերութեամբ և իր ճառի մէջ տեղը ցաւակցութիւն յայտնեց, որ մինիստրնախագահը նրա ճառը չէ լսում: „Ես կարող եմ լսել և մի և նոյն ժամանակ ուրիշ բանով պարապել", նկատեց Գամբետտա: Այնուհետև Ֆրենօ յանդիմանեց պատգամաւորների ժողովին, որ նա հաւանութիւն է տալի ամեն բանի համար պատրաստ այժմեան մինիստրների պահանջներին: Նախագահը կամենում էր քուէարկել Ֆրենօի առաջարկութիւնը, երբ սենատի անդամ Լօրժերիլ սկսեց պաշտպանել եկեղեցին և պահանջեց, որ մինիստրը նրան պատասխանէ:

Գամբետտա ասաց. „Ես համաձայն եմ Լօրժերիլի կարծիքի հետ, նրա պատճառաբանութիւնները անհերքելի են": Աջակողմեան կուսակցութեան անդամ Հաւարդի ցաւում էր որ Գամբետտա մերժում է եկեղեցին: Նա ոչինչ չունի Գամբետտայի դէմ: Նա խելացի է, թէպէտ մի փոքր անզգոյշ: Կերդրել պատգամաւորների անունների մի շարք կարդաց, որոնք ասում էին, որ նրանք համարներում կը հրատարակենք նրանց անունները ու ազգանունները:

—

Ստացանք Թիֆլիսում հրատարակվող ռուսաց «Гусли» պատկերազարդ, ծաղրական շաբաթաթերթի երկու համարը: Այդ հրատարակութեան խմբագիրն է պ. Տիսօրժէվսկի, աշխատակիցներից մինը պ. Պալմն է, իսկ պատկերները նկարում է պ. Զէմօդանով:

կաթիլներ ի միասին ժողովվելով ու ահագին ալիքներ կազմելով դէպի եզերքը կը մղվին: Յունաստանի, Մօնթէնեգրոյի, Սերբիայի ու Բոլգարիայի հարցերը եթէ այսօր մի յայտնի որոշումն ստացած են, այդ էլ մամուլի չնորհիւն էր, սա մի ճշմարտութիւն է, որ կարծեմ, ամենքը կը խոստովանեն: Ուրեմն պէտք է աշխատել, պէտք է ջանալ հայոց խնդիրն էլ եւրօպական լրագրութեան առարկայ չմնել, որովհետև այն ժամանակ լուսաւորեալ, քաղաքակրթեալ և ազատութիւն սիրող եւրօպացին կը տեսնէ, որ կայ մի ընդունակ ու աշխատասէր, բայց գերութեան խաւարի մէջ խեղդված ազգ և կը չտապէ նորան օգնութեան ձեռք հասցնելու, նրա ազատութեանը պաշտպան կը հանդիսանայ:

Աստում եմ պէտք է աշխատել, պէտք է ջանալ հայոց խնդիրը եւրօպական լրագրութեան առարկայ չմնել, բայց ո՞վ պէտք է աշխատէ:

Ի հարկէ մենք, հայերս. ո՞վ պէտք է մտածէ մեր տառապեալ եղբարց համար, եթէ ոչ մենք. ո՞ւմ սիրտը պէտք է ցաւի ստրուկ հայ եղբայրներիս համար, եթէ ոչ մեր՝ նոցա արիւնակից և մի և նոյն ժամանակ առատօրէն ազատութիւն վայելող հայերիս: Ուրիշները մեզ առաջարկում են իրանց միջնորդութիւնը, իրանց ծառայութիւնը, օգուտ քաղենք դոցանից, բայց չը մոռանանք, որ միջնորդութեան ու ծառայութեան համար պէտք է վարձատրութիւն. և ինչ է այդ վարձատրութիւնը—10 հազար ֆրանկ կամ չորս հազար բուբլ (դուցէ և աւելի քիչ):

Եթէ հայերիս մէջ կան չատ աղքատներ ու չքաւորներ, փառք Աստուծոյ, հարուստների և ունեցողների թիւն էլ պակաս չէ, մեծ վնաս չէր դիպչի մեր միլիոնաւորներին ու մեծատուններին, եթէ այդ գումարը ժողովէին իրանց մէջ և վճարէին, բայց որքան լսել եմ, ասում են, թէ ուղտին աւելի հեշտ է ասեղի ծակովն անցնել, քան թէ հայ հարուստներին իրանց ազգին օգնելու համար մի բուբլ զոհել: Ուստի ես դիմում եմ թէպէտ և չքաւոր, սակայն զգայուն սիրտ ու ազգային սէր ունեցող հայերին, թող նրանք չտապեն գործին օգնելու, թող նրանք բաժանորդ գրվեն Ֆլօքէի «Union Republicaine» լրագրին պատուական «Մշակիդ» միջնորդութեամբ, որը իսկապէս ազգին մշակ դառնալով, չի մերժի և այս բեռն իր վրա վերցնելու: Մենք, հայերս, մէկ վատ սովորութիւն ունենք, երբ հազարիցը մէկ անգամ բաղդը մեզ կը ժպտայ, մենք սառնութեամբ կընդունենք այն և ուշադրութիւն չենք դարձնի նրա վրա, իսկ երբ այդ ժպիտը կանցնի, կանհետանայ՝ այն ժամանակ երկու ձեռք կանենք ու մի գլուխ ու կը սկսենք անողոքմարար գլուխներս ջարդել. սրա օրինակները չատ են և ամեն ընթերցող անշուշտ գիտէ զանոնք, թող այս անգամ անցեալներինը մեզ խրատ լինի և չը հետևենք նրան, որպէս զի դէթ այս անգամ մեր գլուխները ծեծ չուտեն:

Մօտերքս «Մեղու Հայաստանի» լրագրի մէջ (№ 243) մի նամակ կար Փարիզէն տպած Ս. Ռ. ստորագրութեամբ: Պարոնը իմ սրտակից բարեկամներից մէկն է, որի ինձ գրած նամակի մի կտորն իսկ ես մէջ բերած եմ այս յօդուածիս սկզբում: Նա դժգոհութիւն ցոյց կը տայ «Journal d'Orient»-ի դէմ, և մինչև անգամ զայն վնասակար կը համարէ. նոյն կարծիքի է գրեթէ և մեծ. պ. Սպանդարեանը (Մեղու № 247): Թող ներեն ինձ մտերմաբար իմ բարեկամ Ս. Ռ. և պ. Սպանդարեանը, որ ես այստեղ մի հարց առաջարկեմ նոցս. Ինչ է նոցա դժգոհութեան պատճառը «Journal d'Orient»-ի դէմ և ինչ ստացած կամ ստանալի վնասներ ունենք մենք սրանից: Մթթէ այն, որ այս օրգանը նորածին է և դեռ ես ոյժ ու կարողութիւն չէ ունեցել մի զօրաւոր կուսակցութեան օրգան դառնալ: Բայց մթթէ մենք պէտք է ամեն նորածին բան, ամեն նորածին արարած ճնշենք, հալածենք, խեղդենք մինչև անդամ, որովհետև նա նորածին է. մթթէ ամեն մի ծնող պէտք խեղդէ, սպանէ իր նորածին մանուկին, որովհետև վերջինս դեռ չէ կարող կոչվել մարդկութեան անդամ և սրան մի չօշափելի արդիւնք չէ տուած, չը նայելով որ դուցէ դա մարդկութեան կամարի մէջ մի փայլուն աստղ լինէր: Մթթէ նրա համար է նա վնասակար, որ հայոց փողերն է ուտում, բայց ինչ ենք տուել մենք նրան, մի երկու հազար բուբլի. վերոյիշեալ մեծապատիւ յօդուածագիր պարոնները չատ քաջ ծանօթ են լրագրաց ամտեսականութեան հետ, թող նրանք խղճի մտօք վկայեն, թէ արդեօք երկու հազարով կարելի է մի լրագիր պահել և այն էլ այնպէս, որ մեզ, հայերիս հաճելի լինի. իսկ թէ նա զանգատաւոր է իր նիւթական պակասութեան համար, մթթէ դա յանցանք է. մեր հայ լրագիրներից ո՞րը չէ գանգատաւոր իր նիւթական դրութիւնից, ո՞րն է խունկ ու կնտրուկ ծխում հայերի առատաձեռն օգնութեան համար: Գուցէ մենք պէտք է զժգոհ լինենք, որովհետև նա, «Journal d'Orient»-ը, մեզ խարել է, խոստացել է միչտ հայերի մասին գրել, իսկ այժմ հայերի վրա ուշադրութիւն չէ դարձնում. այդ էլ, իմ կարծիքով, արդարացի չէ, չատ քիչ համար կը պատահի, որ հայերի վերաբերմամբ մի բան չը պարունակէ իր մէջ, իսկ թէ այն չէ գրում, ինչ որ մեզ է հարկաւոր, ո՞վ է մեղաւորը, ինչու հայերը ծուլութիւն են անում, ինչու բան չեն գրում: Վերջապէս կարելի է նա մեզ վնասակար է նրանով, որ արգելք է լինում մեզ մի աւելի հռչակված, մի աւելի մեծ նշանակութիւն ունեցող լրագիր, ինչպէս Union Republicaine, Gasette Oriental և այլն ձեռք բերելու. բայց դա մէկ հիմնաւոր պատճառ չէ, նա իր դրօշակը բարձրացրեց տաճկահայոց դատը պաշտպանելու այն ժամանակ, երբ միւս լրագիրները չէին անդամ երազում հայոց հարցը, արդեօք մեր սուրբ պարտաւորութիւնը չէր պահպանել, քաջալերել և միջոց տալ նրան այդ դրօշակը չուտով չիջցնելու, որպէս զի ուրիշներն էլ նայելով սրա վրա՝ հետևէին նոյն օրինակին: Եւ արդեօք այդպէս էլ չեղաւ. եթէ այսօր մենք սրտի ուրախութեամբ տեսնում ենք, որ «Union Republicaine» «Gasette Orientale» կամենում են հանդէս դուրս գալ հայերին պաշտպանելու համար, մթթէ դա «Journal d'Orient»-ի շնորհքը չէ, մթթէ դա բարի նախանձի արդասիքը չէ: Ինչու մոռանանք այն լաւութիւնը, որ արաւ մեզ Սալլի օրգանը և երախտամոռ լինենք նրան: Ես չեմ պնդում թէ Սալլի օրգանը Ֆլօքէի օրգանից (Union Republicaine) գերազանց և օգտաւէտ է. վերջինիս նշանակութիւնը աւելի և աւելի մեծ է և մեզ մնում է ջանալ մեր ազգին բարիքը ցանկացող անձանց նպաստով օր մի առաջ նրան ձեռք բերել, սակայն արդարացի էլ չի լինի բոլորովին երես դարձնել «Journal d'Orient-ից՝ նրան անօգուտ և ապարդիւն համարելով: Ամենքը գործում են իրանց կարողութեան ու ոյժի չափ, յարգենք ամեն անհատի ոյժը, կարողութիւնը և ոչ թէ այսօր մի աւելի ուժեղը տեսնելով, մոռանանք նրան, որ երէկ մեր իդէալն էր: Մեզ հայերիս մէջ մի վատ սովորութիւն կայ, որ եթէ ուզում ենք մէկին գովել, բարձրացնել, անպատճառ պէտք է նրա նմանին, նրան համապատասխանողին պարսաւենք, ցածրացնենք:

Բժ. Կ. Մելիք-Բէգլարեան

ձայն կը տան յօգուտ կրեդիտի այն պատճառով, որ ծախսերը արդէն արված են։ Նրանք ցաւում են զօրքերի մասին, որոնց խնդիրը այդպիսի քաղաքականութիւնը վըտանգաւոր և դժուար է դարձնում։ Այդ խօսքերի դէմ Գամբետտա բողոքեց նրանց վիրաւորական համարելով զօրքերի համար։ Այդպիսի մեղադրանքը ոչինչով չէ արդարանում։ Ես առաջարկում եմ դուքս դը-Բրոլիին, ասաց Գամբետտա, հաղորդել մեզ իր ստրատեգիական տեղեկութիւնները։ Այդ առարկայի մասին ես խորհրդակցել եմ գործին ծանօթ անձանց հետ և, թէպէտ ես շատ եմ ցանկանում զեղծումների առաջն առնել, ես պէտք է բողոքեմ այն անարդարութեան դէմ, որ ցոյց են տալիս մեր զօրապետներին, իսկ դրա պատճառը կուսակցական ոգին է (ծիծաղ)։ Դուք ծիծաղում էք։ Ծիծաղեցէք. դա աւելի հեշտ է, քան թէ հերքել ասածները։ Կերդրել ոչ մի նշանաւոր փաստ առաջ չը բերեց պատերազմական սխալները ապացուցանելու համար։ „Եթէ դուք ճշմարիտ ոգևորված լինէիք աղգասիրութեամբ, որի մասին դուք այդպիսի ֆրազներ էք արտասանում, դուք արդարութեամբ կը վերաբերվէիք դէպի մեր զինեալները։ Դուք կը յիշէիք, թէ նրանք ինչպիսի դժուարութիւնների դէմ են մաքառել։ Դուք կը հաւանեիք և այն քաղաքականութիւնը, որ միջոց տուեց զօրքերին կատարել իրանց պարտականութիւնը։ Մեղադրանքների փոխարէն փաստեր առաջ բերենք։ Ի՞նչի այդ փաստերը չը կան։ Եթէ կերդրել ունի փաստեր, թող նրանց յայտնէ մեզ։“ „Դուք ինքներդ յանձն էք առնում պատասխանատուութիւն նախկին մինիստրութեան գործողութիւնների համար, նկատեց կերդրել։ Ինչ կը վերաբերի փաստերին, ահա ձեզ օրինակներ. մեր զօրքերը ուղարկվում են հարաւային Օրան։ Նրանք թւով քիչ են, բայց ընտրութիւնների ժամանակ այնու ամենայնիւ նրանց յետ են կանչում Ֆրանսիա։ Պատերազմական մինիստրը առաջ յայտնեց, որ 1876 թուականին հաւաքած զօրքերին պէտք է իրանց դրօշակների մօտ պահել, իսկ յետոյ քաղաքական պատճառներով հրաժարվեցաւ այդ նախագծից“։ Գամբետտա ասաց. «Այն պատասխանատուութեան մասին, որ ինձ վրա են դնում, պէտք է մի անգամ ընդ միշտ մեկնութիւններ տալ։ Երբ հարցը նախկին մինիստրութեան այնպիսի կարգադրութիւններին է վերաբերում, որոնց արդէն ընթացք է տուած, լինեն նրանք պատերազմական թէ ֆինանսական կարգադրութիւններ, նրանց շարունակութեան և հետևանքների համար պատասխանատուութիւնը ես կատարելապէս ինձ վրա եմ առնում։ Բայց անիրաւացի կը լիներ մեզ վրա պատասխանատուութիւն դնել մեր նախորդների դիտաւորութիւնների և ձեռնարկութիւնների համար։ Կարո՞ղ եմ արդեօք ես պատասխանատու լինել այն փաստերի համար, որոնք պատահել են այն ժամանակ, երբ ես գործողութիւնների ազատութիւն չեմ ունեցել։ Ես պատասխանատու եմ միայն այն անցքերի համար, որոնք պատահում են նոյեմբերի 15-ից յետոյ։ Ինչ կը վերաբերի կերդրելի ներկայացրած փաստերին, նրանց մենք շատ անգամ ենք լսել։ „Դուք նրանով սկսեցիք, որ շատ քիչ զօրք ուղարկեցիք“, ասում են մեզ։ Կերդրել։ Ես այդ չասացի։ Ես ասացի, որ դուք յետ կանչեցիք առանց այդ էլ թոյլ զօրքերի մի մասը։“ Գամբետտա. „Բայց դուք այդպէս չը սկսեցիք։ Մինչդեռ նոյն իսկ Ֆունիսի արշաւանքի սկզբին մեզ մեղադրում էին, որ մենք շատ զօրք ուղարկեցինք մի խումբ խրումբներ դէմ։“ Գամբետտա այնուհետև պաշտպանում էր պատերազմական մինիստրին, ասելով, թէ աւելի մեծ հոգատարութիւն զօրքերի համար ոչ ոք չէր կարող ունենալ։ „Ուրեմն ի՞նչի փոխեցիք դուք այդպիսի պատուական մինիստրին“, նկատեց Կերդրել։ Գամբետտա։ „Եթէ քաղաքական վիճաբանութիւններին դուք կամենում էք անձնական բնաւորութիւն տալ, ես պատրաստ եմ։“ Մարշալ Կոնրօբեր գովեց Ֆունիսի մէջ գործող զինուորներին և զօրապետներին, բայց նկատեց, որ Գամբետտա սխալվում է, կարծելով, թէ Ֆունիսի արշաւանքը օրինակելի կերպով էր կատարվում։ Նա յիշեցրեց մարշալ Բիւժոին և ուրիշներին։ Գամբետտան նկատեց, որ այն ժամանակվայ զօրապետներին այժմեանների հետ չէ կարելի համեմատել։ Հները հեշտութեամբ տանում էին արշաւանքի դժուարութիւնները։ Այնուհետև սենատը կրեդիտ հաստատեց 249 ձայներով։ Այդ հարցի դէմ սենատի մէջ ոչ մի քուէ չը տրվեցաւ։

Պատգամաւորների ժողովի նիստի ժամանակ Կլովիս Հիւգ հաշիւ պահանջեց պատերազմական մինիստրից պաշտօնական նոր անձանց նշանակելու վերաբերութեամբ։ Նա յիշեցրեց Գամբետտայի խօսքերը, որ նա կը նորոգի ծառայողների կազմակերպութիւնը։ „Ես երբէք այդ չեմ ասել“, նկատեց Գամբետտա։ Հիւգ աւելացրեց, որ այդ բանը կայ կառավարչական նախագծի մէջ, մինչդեռ պաշտօնական մի քանի նոր անձանց նշանակելը ամօթալի է։ Նախագահը Հիւգին կարգի հրաւիրեց։ Վերջինը շարունակեց, թէ գեներալ Միրիբելի նման անձնաւորութեանը գլխաւոր շտաբի հրամանատար նշանակելը վտանգաւոր է, որովհետև, ինչպէս երևում է պատգամաւորների ժողովի այժմեան նախագահի զեկուցումից 1877 թուականի ընտրութիւնների մասին, Միրիբել համախոհ էր մինիստր Բօշրուէի հետ, որ մտադիր էր ոչնչացնել հանրապետութիւնը։ Այդ մարդը այժմ զինուորական ամենաբարձր պաշտօն է ստացել։

„Եթէ մայիսի 16-ի մինիստրութիւնը դատի կանչվեր, շարունակեց Հիւգ, գեներալ Միրիբալ պատժված կը լիներ։ Գեներալ Գալիֆէ ներկայումս նմանապէս զինուորական նշանաւոր պաշտօն է ստացել։ Միրիբալին աւելի մեծ իրաւունքներ են տուած, կարծես այն նպատակով, որ նրան կարելութիւն տրվի վնասել հանրապետութեանը։“ Պատերազմական մինիստրը մեկնեց, որ գեներալ Մերիբել գործունեայ և աշխատասէր մարդ է։ Մինիստրին այդպիսի մարդ հարկաւոր էր զօրքերի վերակազմութիւնը վերջացնելու համար։ Նրա ազնուութիւնը անկասկածելի է։ Պատերազմական բարձրագոյն խորհուրդը պէտք է ընդունակ մարդիկներից լինի կազմված։ Կառավարութիւնը նրանց հետ ոչ մի համաձայնութիւն չէ կայացնում, մինչև նրանց չէ հրաւիրում մասնակցել խորհրդին։ Քաղաքական պատճառները այս դէպքում աւելորդ էին, որովհետև հանրապետութիւնը ամուր հիմունքներ ունի։ Մինիստրը ծածկում է իր պատասխանատուութեամբ իր բոլոր պաշտօնեաներին։ Նրա հաւատարմութիւնը դէպի հանրապետութիւնը մի զրաւական է, որ նա նոյնպիսի հաւատարմութիւն կը պահանջի և իր պաշտօնեաներից։

Հաւատացնում են, որ սենատի անդամների լրացուցիչ ընտրութիւններից յետոյ Գամբետտա կը վերանորոգէ իր մինիստրութիւնը։ Լէօն Սէ կը ստանայ ֆինանսների մինիստրի պաշտօն, իսկ Ֆրէյսինէ առևտրական մինիստրի։

ՆԱՄԱԿ ԱՒՍՏՐԻԱՑԻՑ

—

Վիէննա, 10 դեկտեմբերի

Վիէննացիք անմխիթար էին չնաչխարիկ Սարա Բերնար դերասանուհու գնալուց յետոյ, մինչդեռ ճակատագիրը բազմապատիկ անմխիթար մի սուգ սահմանած էր Վիէննացոց, Բրնկ թատրոնը հանդերձ հանդիսականօք հրոյ ճարակ անելով։

Ցակաւին մի ամիս առաջ, նոյն թատրոնում, ջերմ ծափահարութիւններու, կեցցէներու, ցնծութեան աղաղակներու և խնդութեան ձայներու արձագանքները բոլորովին չանհետացած, այս ամենին զառնակսկիծ և ողբագին լաց ու կոծերու գոչիւնները յաջորդեցին։

Ըստ նոր տօմարի, ներկայ ամսոյս ութերորդ գիշերը ժամը 7-ին Վիէննայի երկինքը աղէտալից մի լոյսով կարմրած էր. ամբոխը վերջին աստիճան անձկութեամբ և տխրագին մի լռութեամբ կը դիտէր հոյակապ Բրնկ թատրոնը, որ, ինչպէս գիցաբանական մի տաճար, կատաղի և լափէզ բոցերու մատնված՝ իր մէջը բազմաթիւ զոհեր ողջակէզ կանէր։

Թատրոնը 2000 հոգի պարունակելու չափ ընդարձակ է, բայց նոյն գիշերը հանդիսականաց թիւը 1700 հոգի էր։ Ճիշդ վարագոյրը բացվելու վայրկենին, բեմի առաստաղին ներքնակողմը զետեղված գազերից մինը բռնկելով և կրակը անմիջապէս վարագոյրների հաղորդվելով, յանկարծ feuer! (հրդեհ) չարագուշակ և սոսկալի ճիչը կը սկսի։ Գազերի օդնութեամբը կրակը դժոխային արագութեամբ կը շրջապատէ, նախ վերնայարկը, որտեղ միայն 700 հոգի կան, ապա մինչև օթեակները և գետնայարկը կը հասնի։ Թատրոնը ընդամենը երեք դուռ ունի, որոնք անբաւական են հանդիսականաց փախուստը դիւրացնելու, մանաւանդ այդպիսի եղանակաւ խոյս տալու դժուարութեանց մէջ։ Վերնայարկը գտնվողները խուճապիւ սանդուղներից վար դահավիժելու ժամանակ, մէկզմէկ ոտնակոխ կանեն, կը խեղդեն, կը ջախջախեն, կը սպանեն, և յետոյ.. ակամայ մարդասպանները իրենց զոհերին հետ ի միասին պէտք է այրվէին։ Թատրոնի երեք դռները արդէն նեղ չինված են, իսկ պատուհանները, չէնքին մեծութեանը նայելով անհամեմատ փոքր և սակաւաթիւ։ Շատերը կիրչ մահուան զարհուրելի տանջանքը ամբելու համար, ինքզինքին լուսամուտներից վար կը նետեն, բայց չեն ազատվիր, այլ միայն մահու եղանակը կը փոխեն քարայատակի վրա ջարդվելով։ Աղեկէզ հրդեհը մինչ լոյս տևեց, և ահա «անդր է լալ և կրճտել ատամանց» պատգամին իրականութիւնը առաւօտուն երևան եկաւ։ Գիշերը ժողովուրդը ոչինչ չը գիտէր և կը յուսար որ զոհ չունի, բայց առաւօտուն, հայրը տղուն իզուր էր սպասում, մանկամարդ աղջկունք անհետացել էին, մատղաշ պատանիներ և երիտասարդներ բացակայ էին, ընտանեաց հայրեր, նորապսակ ամուսիններ չը կային։ Կրկին յոյս կար. կարելի էր խուսափելու յաջողած, վիրաւորեալներ դեռ կենդանի լինէին։ Սակայն երբ հրաշէջ զինուորք և ոստիկանք ժամը 10-ին սկսան այրված դիակներու կոյտերը հրդեհի աւերակներից դուրս հանելով ընդհանուր հիւանդանոցը փոխադրել, այն ժամանակ սարսափելի էր աչքի երևցած անկարագրելի տեսարանը, սրտաճմլիկ էր դիակների ցերեկոյթը, նրանց վրա մարդկային մնացորդի հետքը և նշույլը անգամ չէր մնացել, նման էին վառարանից դուրս հանված կիսախանձ փայտի կտորներու։

Դիակների հիւանդանոց բերելու նպատակը այն է, որպէս զի տերերը դան այցելեն և այդ մարդկային մարմնոյ բեկորներից իրենց պատկանածը պահանջեն, բայց ինչպէս կարելի է ճանաչել։ Կանայք, ոմանց քօրսէտը դեռ մէջքը, ոմանք 12 կոճակներով ձեռնոցներ հագած, ոմանց բազուկը, սևացած ոսկի ապարանջաններով զարդարված, Լուի XV-ի ոճամամներ յոտս, իսկ գլուխներ, ոմանց բացակայ, այլոց՝ բոլորովին անճանաչելի և ածխոյ կտորներ, անդին երեխաներ, պատանիներ, հագած և մինանց կպած, աստին կիսակէզ չափահաս մարդիկ, որոնց ոտները դեռ կը մնան, երիտասարդներ, ծերունիներ, ոսկի շղթայ և ժամացոյցներով, ամենքը զարհուրելի կերպով այրուած, ջարդված և յօշոտուած։

Երևակայեցէք, ինչ քստմնելի և ահռելի վայրկեան, հայրեր, մայրեր, եղբայրներ, սա դիակների վրա հետազօտութիւններ պէտք է անեն իրենց ամենասիրելիները ճանաչելու և գտնելու համար։

Մինչ այս բոպէիս, մօտ 400 դիակներ դուրս հանված են, բայց ասում են դեռ ևս աւերակաց մէջ միմանց վրա դիզված և ածուխ դարձած դիակներ կան։

Այս աղէտը գերազանցեց Նիւ-Եօրքի և Հիսսայի թատրոնների հրդեհները. ամբողջ Վիէննան լաց է լինում, դարերէ ի վեր Վիէննայում երբէք այսպիսի դառնամահ մի դէպք տեղի չէ ունեցել։

Հասարակութեան մնապաչտ մասը՝ Սարա Բերնարի այցելութեան և հետը բերած ապերջանկութեան հետևանքը լինել կը կարծէ սոյն դժբաղդութիւնը, աւելորդ է ասել որ անտեղի կարծիք է։

Այսու ամենայնիւ մեծ և անմխիթար է Վիէննայի սուգը։

***

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 դեկտեմբերի։ «Прав. Вѣстн.» լրագիրը հաղորդում է. Հիւսիսային կովկասը աղ մոցնելու արդելքը ոչնչացրած է։ Սկսված գործերը աղի յափշտակութեան մասին դադարեցնվում են։ Կուբանի և Ցերսկայա զօրքերի ըՀերի աղի արդիւնաբերութեան և վաճառման սահմանափակումը փոփոխվում է։ Լրագիրները դեկտեմբերի 11-ից հաղորդում են. Անտարային ընկերութեան մէջ կարդացվեցաւ իշխան Թումանովի մեծ զեկուցումը կովկասի անտառների արդիւնաշահութեան մասին։ Բեֆերենտը առաջարկում էր արդիւնաշահութիւն մասնաւոր դումարներով և ընդարձակ սահմաններով։ Պրոֆէսսոր Վերեխա պատասխանեց յօգուտ աւելի կանոնաւոր արդիւնաշահութեան, որ չէ ոչնչացնում անտառները։ Կովկասեան նաւթի արդիւնաշահութեան գլխաւոր ընկերութիւնը Լիոնի մէջ իր ներկայացուցիչ ընտրեց Նօվօսելսկուն, իսկ փոխնախագահ Զբեշեվսկուն։ Նիւթը ուղարկելու համար կազմվում է նաւեր կառուցանող ընկերութիւն։ Այդ նպատակի համար Միջերկրական ծովի ընկերութիւնը առանձին նաւեր է կառուցանում։ Ջերեվինի վրա բեվոլվեր արձակելու մասին դատաստանական գործը նշանակված է դեկտեմբերի 14-ին փակված դռներով։ Ենթադրվում է Վոլգա գետի վրա մեծ նաւահանգիստ կառուցանել, որտեղ ձմեռը կը մնան նաւերը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 դեկտեմբերի։ Կառավարչական հաղորդութիւն. դեկտեմբերի 7-ին Սեվաստօպոլի գանձարանից յափշտակված է 47,000 ր.։ Դեկտեմբերի 9-ին Արմեանսկի մէջ Տավրիչեսկայա նահանգի կալանաւորված են երեք մարդ, որոնց մօտ գտել են 27,000 ր. գողացած փողերից։ Լրագիրները դեկտեմբերի 12-ից հաղորդում են. քնող մասնաժողովը, որ նշանակված էր դաշտային ինտենդանտստվօի գործողութիւնները անցեալ պատերազմի ժամանակ քննելու համար, ոչնչացրած է։ Սանկօվսկու և Մելնիկովի դատաստանական գործը դեկտեմբերի 14-ին չի քննվի։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 դեկտեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 93 ր. 75 կ., երկրորդ 90 ր. 50 կ., երրորդ 91 ր. 25 կ., չորրորդ 90 ր. 62 կ., հինգերորդ 90 ր., 75 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 224 ր., երկրորդ 216 ր. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ր. 25 կ.; երկրորդ 90 ր. 25 կ., երրորդ 90 ր. 25 կ., ոսկի 7 ր. 83 կ.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 25,31 պէնս, Ամստերդամի վրա 128,25 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 215 մարկ 50 պֆ., փարիզի վրա 266 փրանկ 50 սանտիմ։ Բօրսայի տրամադրութիւնը հանգիստ է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

144 Արծրունու գալերէա 144
ամենաէժան պահեստ
Մերէլի և հայելիների։

ԲԱԹՈՒՄԻ
ԿՕՄԻՍԻՕՆԷՐ

ԱՐՇԱԿ ԾԱՏՈՒՐԵԱՆՑ

Ընդունում է ամեն տեսակ պատուէրներ, յանձնարարութիւններ և ապահովանք։

10—20

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ներկայ տարուայ հոկտեմբերի 1-ից բանալով ԵՐԵՒԱՆՈՒՄ գրավաճառանոց, նոյնպէս և ուսումնարանական, նկարչական և կազմարարական պիտոյից իրեղէնների խանութ, հրաւիրում եմ գրաւոր աշխատանքների հեղինակներին, թարգմանիչներին, հրատարակիչներին և լրագրական խմբագիրներին (թէ հայ և թէ ռուս լեզուներով) ուղարկել ինձ վաճառելու իրենց աշխատութիւնները ԿՕՄԻՍԻԱՑՈՎ։ Իմ հասցէն. г. Эривань, Нерсесу Симеонянцу, магазинъ „Другъ Дѣтей.“ 2—10

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆ

Պ. ԲԷԿԷԱՆՕՎԻ, Պ. ԿՕԿՋԱԵՎԻ և ԸՆԿ. Մագազինովսկայա փողոց, Ալեքսանդրիան այգու դիմաց Աբօվեան եղբայրների տանը։

ԱՌՆՈՒՄ է և ծախում է 5% տոմսակները 1 և 2 փոխառութեան։ Յանկացողներին յետաձգում է վճարը 12 ամսով, ընդունելով 25 բէկ։ Տարած գումարը և կուպօնները պատկանում են առնողին գնելու օրից։

ՓՈԽ է ՏԱԼԻՍ փողեր տոմսակների գրաւականով։

ԱՊԱՀՈՎՈՒՄ է երկու փոխառութիւնների տոմսակները հանդէպելուց 50 կոպէկով։

ԸՆԴՈՒՆՈՒՄ է փողերը դնումներով և ընթացող հաշուով։

2—3

ԹԷՑ ՍԻՐՈՂՆԵՐԸ ԵՒ ՃԱՆԱՉՈՂՆԵՐԸ պէտք է գնեն **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ թէյ լաւ տեսակի ֆունտը 1 ր. 20 կ. և 2 ր. և համեմատեն առաջինը 1 ր. 60 կ. հետ և երկրորդը 3 ր. հետ ամեն տեղ **ԹԻՖԼԻՍՈՒՄ**, որպէս զի իմանան Անգլիական խանութի մէջ ծախվող ամեն տեսակ թէյի համեմատական **ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹԻՒՆԸ**։ Բացի այդ Անգլիական խանութը կշռում է **ՄԱՔՈՒՐ** թէյ առանց **ԹՂԹԻ** և **ԱՐՃԱՃԻ**։

94—100

ՐԷՍՏՕՐԱՆԸ

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՕՆԻ ՄՕՏ

Մի նոր տիրոջ ձեռքն անցնելով, ստացել է այժմ մի բոլորովին այլ և գեղեցիկ տեսք, ունի ընտիր ճաշեր և ընթրիքներ, նոյնպէս և լաւ խմիչքներ։ Գները շատ էժան են

13—20

Въ Редакціи газеты
«МШАКЪ»
Продается
„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“
Д. Григорія АРЦРУНИ.
Брошюра напечатана въ Москвѣ.
Цѣна 25 коп.

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 25% ԷԺԱՆ քան թէ ուրիշ տեղ. թէյ, կակաո, շոկոլադ, բիսկվիտներ, մուրաբաներ, բրինձ, ամաններ, բաժակներ, բօկալներ, թէյամաններ, սուրճկներ, ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ, երես լուանալու ամաններ, ԿՈՂՊԵՔՆԵՐ, ԶԳԵՍՏԱԿԱԽՆԵՐ, գդալներ, դանակներ, ԳՐԻՁՆԵՐ, թուղթ, ծրարներ, տետրակներ, մատիտներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ, մէջքակապներ, կլէօնկա, ԹԱՄԲԵՐ, սանձեր, ուլթօներ, ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ, երեսբիչներ, թաշկինակներ, կանանց գուլբաներ, մարգկերանց գուլբաներ, տուալետի սապօն, հոտաւէտ ջրեր, շերբեթ, ցիտրան մագնեզիա, խինայի գինի, պօրտվէյն, խերես, կօնիակ և 1,000 այլ առարկաներ։ **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ։ ՆՈՅՆ ՏԵՂԸ** վաճառականներին **ՄԵԾ** քանակութեամբ ծախվում է **ԹԷՅ**. պուդերով 40, 46, 52, 58, ր., իսկ ֆունտերով 1 ր. 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ., իսկ ամենաբարձր թէյը ֆունտը 2 ր. քաշը ԱՌԱՆՑ ԹՂԹԻ։

ՀՐԱՑԱՆՆԵՐ 20—60 ր. և ՉՕԿ-ԲՕՐ (chokl bore) George Dau-ի գործարանից 120 ր., ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ 4—34 ր., ԲՈՒԼԴՕԳ (bull dog) 11—20 ր., կանանց թամբեր 65 ր., շեֆիլդի դանակներ 3 ր. 50 կ. դիւժինը, ալբօմներ կիսագնով, ֆիլտրներ և այլն։ Ամենամեծ պահեստ հրացանների և ռէվոլվերների Թիֆլիսում։

69—100

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ 15,000 ամաններ առաջին տեսակի 15 կ. հատը, 12,000 խրուստալի բաժակներ 25 կ. հատը, 10,000 բօկալ և բաժակներ 10 կ. հատը, 10,000 մատուցարաններ և կողպէքներ 15 կ. հատը, 10,000 սասեղ 8—40 կ. հարիւրը, 10,000 պենալներ 5 կ., 5,000 շիշ պօրտ-վէյն և խերես 1 ր. հատը, 2,000 արշին կլէօնկա 60 կ.—2 ր. արշինը, 2,000 դիւժին մատիտներ և գրչակոթեր 8 կ. դիւժինը, 2,000 ֆ. հնդկական բրինձ 7, 8 և 10 կ. ֆունտը, 1000 ֆունտ լէպէշկա 50 կ. ֆունտը, 600 անգլիական ռէվոլվերներ 4—34 ր. հատը, 300 անգլիական հրացաններ 20—100 ր. հատը, դրապ, տրիկօ, ալբօմներ, ձմեռվայ պալտօներ, գլխարկներ, վարտիկներ, հագուստ կէս գնով։ Ծախվում է **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ։ Նոյն տեղը ծախվում է ծովային **ԽՈՏ** պուդը 2 ր. 50 կ.։

21—60

ՎԻԷՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ (աթոռներ և բազկաթոռներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջի իրոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում Մի-ՔԱՅԵԼ ՏԷՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ պահեստում։

Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով. Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову.

117—150

Վերականգնեցնող **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ**, մազերը ամրացնող և նրանց **ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ** վերադարձնող։ Գինը 2 ր. շիշը, **ՓՈՍՏՈՎ** ուղարկված 2 ր. 49 կոպ. **ԱՆԳԼԻԱԿԱՆ** խանութի մէջ

Մի և նոյն տեղը **ԹԻՆԱՅԻ ԻՒՂ**, մազերը ամրացնելու համար, 1 ր. ամանը վրձին գլխաչափի դէմ, **ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱՊՕՆ** և հոտաւէտ ջրեր և այլն։

55—100

ՇԻՐԱԿ՝ տեղագրութիւն պատկերացոյց, հաւաքեց Հ. Ղ. Ալիշան

Մանրամասն և հարազատ հետազօտութիւն Շիրակ գաւառի, գեղեցիկ քարտէզով և չքեղ պատկերներով զարդարուած։—Հ. Ալիշանի այս վերջին աշխատասիրութիւնը ամենապատուաւոր և առաջնակարգ տեղ պէտք է բռնէ ոչ միայն նոյն հեղինակի մինչև այժմ լոյս տեսած ընտիր երկասիրութիւնների մէջ, այլ և հայկական համայն գրականութեան ծանրակշիռ զարդերից մինը պիտի համարուի։ Ամենայն հայ, որի համար թանգ է իր ազգի անցած գնացած փառքերի նշխարների հետազօտութիւնն ու մշակութիւնը, ագահութեամբ պիտի ձեռք առնէ և իր զրաստեղանի անհրաժեշտ սեպհականութիւններից առաջինը պիտի դարձնէ սրան։ Գինն է 10 ր. ճանապարհի ծախքը 50 կոպ.։

ԳՐԻՉ ԵՒ ՍՈՒՐ՝ պ. Մինաս Չերազի վերջին գրուածքի առաջին հատորն է, որի մէջ յօրինողը չարունակում է այն բանակռիւը գրաբառը պաշտպանողների դէմ, որի սկիզբը ծանօթ է մեզ իւր դաստիարակութիւն անունով գրքից։ Բացի լեզուագիտական հակիրճ և ազգու յօդուածներից, այս գրքոյկի մէջ ընթերցողը կը գտնէ տեղեկութիւններ նաև ուրիշ մի քանի հետաքրքիր հարցերի վերաբերութեամբ։ Գինն է մէկ ռուբլի. ճանապարհի ծախքը 10 կ.։

վաճառվում են

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ.

ՆՈՐ ԴՈՒՐՍ ԵԿԱԾ ԳՐՔԵՐ

Որոնք վաճառվում են ԶԱՔԱՐԻԱ ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ „ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

1	Բագրատունի՝ Տասն պատգամք. գինն է	25 կ.
2	Աղայեանց՝ Անահիտ, հին զրոյց.	50 „
3	Թղուկ, Թարգ. Տէր-Միքայէլեանցի.	30 „
4	Աղքատ մանուկ կամ բարոյական վէպ.	20 „
5	Խաթաբալա Սունդուկեանցի.	50 „
6	Զորս մանրավէպ Տէր-Աւետիսեանի.	20 „
7	Հայերէն լօտո երեխաների համար.	50 „
8	Տէր-Ակորեանց՝ Հայաստանի աշխարհագրութիւն..	60 „
9	Կոստանեանց՝ Գրաբառ բայերի խոնհարումը.	25 „
10	Թադեորեան՝ Փոքր լեզուագիտական հետազօտութեան.	50 „

Եւս ստացուել է Բոստոմի Տէր-Աբրամեանցի 1882 թուի **ՕՐԱՑՈՅՑ**, գինն է 15 կոպ. գումարով առնողներին զիջումն կը լինի։

„ԿՐԿՆԱԿԻ ԻՏԱԼԱԿԱՆ ՀԱՇԻԱՊԱՀՈՒԹԻՒՆ“ ԲՈՒԽԳԱԼՏԵՐԻԱՅ“

Ամենանոր և գործնական ձևի, բացարձակ կանոններով և բացատրութեամբ, որ ամենահեշտ կերպով կարող է սովորացնել հաշուապահութիւնը այն անձանց, որոնք ցանկանում են սովորել կամ ունենալ այդպիսի հաշիւներ, շուտով կը մտնի մամուլի տակ. գիրքը կը բաղկանայ մօտ 400 երեսից. և մաքուր տպագրութեամբ. դորա հետ միասին կը լինի և մի փոքրիկ վիպասանութիւն „Գող“ վերնագրով և „Իմ երգերը“ յաւելուածով. ցանկացողները թիֆլիսում կարող են գրուել „Կենտրօնական“ և „Զաքարիայ Գրիգորեանցի գրավաճառանոցներում և Թադէոս Տէր-Միքայէլեանցի մօտ. Բաղու Բասիյսկիյ մագազինում, ինձ մօտ և „Մարդ ընկ“ գրադարանում։ գաւառական քաղաքներում այն անձանց մօտ, որոնք բարեհաճել են այդ մասին ստորագրութեան թերթ ընդունել։

Երկուսի արժէքն է միասին 2 ր. 50 կ. տպագրութիւնից յետոյ 3 ր.։ Բաժանորդների անունները և ազգանունները կը տպագրուեն գրքի վերջում։

Հրատարակիչ Աբել Դ. Ապրեսեանց

ՎԵՐԱՐԿՈՒՆԵՐ 4 ր., ծրծողներ 1 ր. ծալվող աթոռներ 1 ր. 50 կ., ՓԱՑՏ-ԱԹՈՌ 4 ր., ԲԱԶԿԱԹՈՌ-ՄԱՀՃԱԿԱԼ 10 ռուբլ և աւելի, թէյի բաժակներ 25 և 30 կ., մի աման քորոցներ 50 կ., պաստելա ծխողների համար 60 կ. ֆունտը, անգլիական ՎԱՆՆԱՆԵՐ և այլն ծախվում են **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ։**

10,000 զոյգ գուլբաներ 25 կ.—ից զոյգը, 10,000 զոյգ կանանց ԳՈՒԼԲԱՆԵՐ 30 կ.—1 ր., 7,000 մատուցարաններ 5 կ.—5 ր., 1,000 ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 5 ր.—35 ր., 400 արշին բօմազէյ. 1 ր.—1 ր. 30 կ., պարուսինա 40 կ.—1 ր., 300 հատ ռէվոլվեր 4 ր.—35 ր., 700 ալբօմ ԿԻՍԱԳՆՈՎ, 10,000 ֆունտ թէյ թէցամանով 1 ր. 65 կ.։ եր-կաթէ գրիչներ իւրաքանչիւր ձեռքի համար։ Ծախվում են **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ։

57—100

Դուրս եկաւ մամուլի տակից Սեդրակ Մանդինեանի հետևեալ աշխատութիւնը. „ԿԵԱՆՔԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ“. Ծխական դպրոցների Չորրորդ տարուայ դասընթացք և միանգամայն Ա. Բ. և Գ. տարիների համար հրահանգ։ Ծախվում է բացառապէս „Կենտրօնական գրախանութում։“ Գինն է 75 կոպէկ։

Дозволено цензурою, Тифлисъ 14 Декабря 1881 года.
Типографія Главнаго Управленія Намѣстника Кавказскаго.